

<http://www.economy.am>
<http://www.armef.com>
<http://www.mineconomy.am>
<http://www.gegharkunik.gov.am>

МАРКЕТИНГОВЫЙ АУДИТ КАК СОВРЕМЕННЫЙ ФАКТОР КОНТРОЛЯ

M. N. ЕРГНЯН

В условиях рыночной экономики маркетинговый аудит становится наиболее важен. Он является периодически проводимым независимым анализом стратегической деятельности организации, при котором раскрываются проблемы и возможности, разрабатывается наилучший вариант конкуренции и маркетинговой деятельности с учетом внутренних и внешних воздействий.

MARKET AUDITING AS A MODERN FUNCTION OF CONTROL

M. N. HERGNYAN

In the market economy, the role of the market auditing is considered highly important. It is an independent regular analysis of the organization's external and internal environment, objectives, strategies, and its overall activities. In the process of auditing the organization's challenges and opportunities are revealed, and a best option of competitive and marketing activities is developed taking into account the external impacts.

ԴՈՒԱՐ-ԴՐԱՄ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ա. Ն. ՋԵՐԳՆՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ն. Յ. ՕՅԱՆՅԱՆ

ԳՊԴ բակալավրի ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանող

Շուկայական տնտեսության անցման պայմաններում պետության տնտեսական զարգացմանը նպաստում են տնտեսական ինտեգրացումը, արտաքին տնտեսական կապերի խորացումը և այլ երկրների հետ տնտեսության սերտածումը: Դրանք հատկապես կարևոր են այնպիսի փոքր բաց տնտեսության համար, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է: Այս համատեքստում տնտեսության գործունեության բնույթը կախված է արտադրույթի փոխարժեքի սահմանման համակարգից: Փոխարժեքն այն տնտեսական ցուցանիշներից է, որը կարևոր գործոն է հանդիսանում տնտեսության արտաքին հատվածի հետ գործառնությունների ժամանակ:

Նշենք, որ մեր տնտեսությունը կախված է արտաքին բնույթի գործոններից, ինչպիսիք են արտասահմանյան տրամսֆերտները և արտաքին առևտությունը: Հատկանշական է, որ Հայաստանի արտաքին առևտությունը և տրամսֆերտների զգալի մասն իրականացվում է ԱՄՆ դոլարով, որը նախադրյալ է ստեղծում ոչ միայն դոլարի նկատմամբ փոխանակային կուրսի բարձրացման, այլև դրամաշրջանառության մեջ դոլարի տեսակարար կշռի ավելացման համար: Հայաստանում իրականացվող խոշորածավալ գործարքների զգալի մասի դեպքում արտարժույթը՝ ԱՄՆ դոլարը, գործածվում է և՛ որպես խնայողություն, և՛ փոխանակման միջոց: Սա վկայում է այն մասին, որ դոլարիզացիան գտնվում է բարձր մակարդակի վրա, իսկ գնաճի նպատակով վարվող դրամավարկային քաղաքականությունն առաջադրում է լողացող փոխարժեքի առկայություն: Ընդ որում՝ լողացող փոխարժեքի օգտագործումը հնարավորություն է տալիս լուծելու այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են բնակչության քրաղվածության ապահովումը, գների կայունացումը և այլն: Անշուշտ, փոքր, բաց տնտեսությունում լողացող փոխարժեքի դեպքում խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը չի ազդում եկամտի վրա, քանի որ ազգային խնայողության նվազումը որպես հարկաբյուջետային քաղաքականության հետևանք, առաջացնում է արտաքին ներդրումների կրծատում և փոխարժեքի բարձրացում: Արդյունքում փոխարժեքի բարձրացումը կրծատում է զուտ արտահանումը՝ փոխհատուցելով ներքին ապրանքների և ծառայությունների պահանջարկի ընդլայնումը: Հետևաբար փոխարժեքի աճը և զուտ արտահանման անկումը պետք է լինեն այնքան, որ կարողանան լիովին փոխհատուցել հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը: Այս առումով Կենտրոնական բանկը(ԿԲ) փողի առաջարկը կարգավիրում է այնպես, որպեսզի պահանջվի փոխարժեքի համապատասխանեցումը հայտարարված կուրսի հետ: Երկրում առկա ճգնաժամային վիճակը հաղթահարելու նպատակով ԿԲ-ն 03.03.2009 թ.-ից անցել է լողացող փոխարժեքի ռեժիմի: ՀՅ դրամի և արտարժույթի փոխանակային կուրսերը ձևավորվում են արտարժույթի շուկայում, առաջարկի և պահանջարկի փոխազդեցության միջոցով: Ընդ որում՝ դրամավարկային քաղաքականության ներգործությունն իրականացվում է ոչ թե տոկոսադրույթի, այլ փոխարժեքի փոփոխման միջոցով: Երբ պետական քաղաքականությունն ուղղված է մաքսերի սահմանման հաշվին ներմուծվող ապրանքների պահանջարկի կիճատմանը, դա հանգեցնում է փոխարժեքի բարձրացման, բայց չի կարող ազդեցություն ունենալ եկամտի վրա:

Հետևաբար, ազատ շուկայում ձևավորված փոխարժեքը կարող է փոփոխվել տարբեր գործոնների ազդեցությամբ: Այս դեպքում դոլարիզացիան պայմանավորված է մակրոտնտեսական և ինստիտուցիոնալ գործոններով: Դոլարիզացիայի վրա ազդող մակրոտնտեսական գործոններն են՝

- տնտեսությունում գնաճի բարձր մակարդակի առկայությունը,
 - ազգային արժույթի արժեզրկման ռիսկը:
- Ինստիտուցիոնալ գործոններն են՝
- ապրանքների արտահանման ծավալի գիշումը ներմուծմանը,
 - տնային տնտեսությունների եկամտի հիմնական մասի ձևավորումը արտարժության եկամուտների հաշվին, (տնտեսվարող սուբյեկտները հակված են այդ եկամուտները խնայել արտարժությով),

- ֆինանսական շուկայի թերզարգացված լինելը,
- ազատականացված արտադրութային շուկայի առկայությունը:


Կարճաժամկետ հատվածում դրաբի վրա մեծ ազդեցություն ունեցող գործոնը հայկական դրամի առաջարկն է, որը ժամանակի ընթացքում ենթարկվում է պարբերական փոփոխությունների՝ կապված ամենամսյա աշխատավարձերի, կենսաթոշակների ու բնակչության այլ եկամուտների վճարման հետ: Ընդ որում՝ տնային տնտեսությունների կատարած ծախսի հետևանքով փողի շուկայում շրջանառության մեջ գտնվող դրամական զանգվածը հարաբերականորեն աճում է:

Գաղտնիք չէ, որ ստացված դրամական միջոցները բնակչությունը հիմնականում ուղղում է սպառմանը՝ ստեղծելով սպառողական ակտիվության նկատելի աճ: Դա հանգեցնում է ոչ միայն փողի շրջանառության արագության կարճաժամկետ աճի, այլև դրամի առաջարկի մեծացման: Ամսվա վերջում, երբ բնակչության կողմից կատարված են բոլոր գնումները, վճարված են բոլոր պարտավորությունները պետության հանդեպ, տնտեսությունը կարծես վերադառնում է իր ելակետային մակարդակին: Այսպիսով, տնային տնտեսությունների և ձեռնարկությունների ամենամսյա տնտեսական ակտիվությունը ներգործում է փոխարժեքի փոփոխությունների վրա, որը կարելի է արտացոլել գծապատկեր 1-ի միջոցով:

Գծապատկերից երևում է, որ ստվերագծված ամիսներին փոխարժեքն ամսվա առաջին օրերին աճել է և, որպես կանոն, բարձրակետին հասել ամսվա կեսերին, այնուհետև նվազել է մինչև ելակետային մակարդակը: Նշենք, որ փոխարժեքի վրա մեծ ազդեցություն են ունենում սեզոնային տատանումները: Մեր երկրում տնտեսական տատանումները կապված են սեզոնային փոփոխությունների հետ: Սովորաբար արտագնա աշխատանքի մեկնած քաղաքացիները, արտերկրում կատարելով սեզոնային աշխատանք, որպես աշխատանքի դիմաց տրված վարձատրություն՝ իրենց եկամուտը ստանում են արտադրությով (հիմնականում ԱՄՆ դոլար): Տարվա վերջին վերադառնալով Հայաստան՝ իրենց դրամական միջոցներով փողի շուկայում նրանք մեծացնում են դոլարի առաջարկը: Իսկ տարեվերջին բնակչության եկամուտների ավելացմանք և ամանորյա տոնական գնումներով պայմանավորված՝ աճում է սպառումը: Յետևաբար, սպառման աճը ենթադրում է նաև ներմուծման ծավալների աճ, որն իր հերթին առաջացնում է արտարժույթի նկատմամբ հավելյալ պահանջարկ: Արդյունքում նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին դոլար-դրամ փոխարժեքը ձևավորվում է վերը նշված գործոնների ազդեցությամբ՝ պայմանավորված արտերկրից ստացված տրամս-ֆերտների աճով:

Գծապատկեր 1

Դոլար-դրամ փոխարժեքը (օրական) 2011-2012թթ.-ին¹



Նշենք, որ փոխարժեքի վրա մեծ ազդեցություն ունեն նաև արտարժույթի միջազգային շուկայում տեղի ունեցող փոփոխությունները: Յետազոտությունները ցույց են տալիս, որ ԱՄՆ դոլարի փոխանակային կուրսի տատանումներն իրենց արտացոլումն են գտնում արտարժույթի շուկայում: Նկատի ունենք այն հաճախանքը, որ դոլարի փոխարժեքի տատանումները հաճախ ճշգրտվում են դրամի և այլ արժույթի կուրսով, և միշտ չեն, որ միջազգային հարթակներում փոխանակային կուրսերի տատանումները չեն ազդում դոլար-դրամ փոխարժեքի վրա: Այդ պատճառով որպես ԱՄՆ դոլարի փոխարժեքի համալիր ցուցանիշ՝ դիտարկել ենք Ամերիկյան դոլարի ինդեքսը (U.S. Dollar Index, USDX): ԱՄՆ դոլարի ինդեքսն արտահայտում է դոլարի արժեքը ԱՄՆ-ի վեց խոշոր առևտրային գործընկեր երկրների՝ Եվրագոտու, ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Շվեյցիայի և Շվեյցարիայի արժույթների նկատմամբ և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝


$$\text{USDX} = 50.14348112 \times \text{EUR/USD}^{-0.576} \times \text{USD/JPY}^{0.136} \times \text{GBP/USD}^{-0.119} \times \\ \text{USD/CAD}^{0.091} \times \text{USD/SEK}^{0.042} \times \text{USD/CHF}^{0.036}$$

Գծապատկեր 2-ում ներկայացված տվյալները վկայում են, որ վերջին երեք տարիների ընթացքում միջազգային շուկայում ԱՄՆ դոլարի արժեզրկումն ուղեկցվել է դրամի արժեզրկմանը, իսկ արժևորումը՝ ՀՀ դրամի արժեզրմանը: Անշուշտ, ամբողջ աշխարհում փոխանակային կուրսերի վրա իրենց ազդեցություն ունեն նաև քաղաքական գործոնները: Ցանկացած քաղաքական իրադարձություն կարող է փոխել հետագա տնտեսական իրավիճակի վերաբերյալ տնտեսական գործակալների սպասումները:

¹ Ներկայացված գծապատկերում որպես հիմք՝ ընդունել ենք փոխարժեքի վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական տվյալները:

Գծապատկեր 2

Դոլար-դրամ փոխարժեքը և ԱՄՆ դոլարի ինդեքսը 2010-2012թթ.-ին²



Ուսումնասիրությունները վկայում են, որ 2012թ.-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ՀՀ դրամը սկսել էր արժեզրկվել դեռևս նախընտրական ժամանակաշրջանում, իսկ ընտրություններից անմիջապես հետո՝ երկու ամսվա ընթացքում, այն արժեզրկվել է ևս 6.5%-ով:

Ժամանակակից տնտեսագիտության մեջ փոխարժեքի վերաբերյալ տեսություններում կարևորվում են «Գնողունակության համարժեքության» (Purchasing Power Parity) և «Տոկոսադրույթների համարժեքության» (Interest Rate Parity) տեսությունները: Բաց տնտեսություն ունեցող երկրների արժութային փոխանակային կուրսն ըստ գնողունակության համարժեքության օրենքի սահմանվում է այն հարաբերակցությամբ, որ փոխադարձաբար հնարավոր լինի գնել նույն քանակությամբ ապրանքներ երկու երկրներում: Այս օրենքը չի տարածվում ծառայությունների բնագավառում, քանի որ դրանք ավելի թանկ արժեն, քան թույլ զարգացած երկրներում: Համարժեքային գնողունակության օրենքի պահպանումն անցումային տնտեսություն ունեցող երկրներում ունի այնպիսի առանձնահատկություններ՝ պայմանավորված արտաքին տնտեսական կապերի բնույթի և արտաքին առևտորի հնարավորությունների օգտագործման հետ: Իսկ տոկոսադրույթների համարժեքության տեսության համաձայն՝ հավասար պետք է լինեն նաև երկու երկրների իրական տոկոսադրույթները: Այս տեսությունները վկայում են, որ անվանական փոխարժեքը երկարաժամկետ հատվածում որոշվում է երկու երկրներում գնաճի տեմպի տարբերությամբ: Հետևաբար, երկու արժույթների փոխանակային կուրսը կախված է գնաճի տեմպից և որոշվում է հետևյալ բանաձևով՝


$$\frac{F-E}{E} = \pi_{ՀՀ} - \pi_{ԱՄՆ},$$

² ԱՄՆ դոլարի ինդեքսի վերաբերյալ տվյալներն ըստ Wall Street Journal-ի:

որտեղ՝ F-ը կանխատեսելի փոխանակային կուրսն է,
Ե-ն առկա փոխանակային կուրսն է,
πՀ-ը ինֆլացիայի տեմպն է ՀՀ-ում,
πԱՍ-ն՝ ինֆլացիայի տեպը ԱՄՆ-ում:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ 2000-2012թթ.-ին Հայաստանի Հանրապետությունում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում առկա ինֆլյացիայի տեմպը դոլար-դրամ փոխարժեքի վրա ազդում է շուրջ մեկ տարի անց: Դիտարկումները վկայում են, որ այն տարիներին, երբ ՀՀ-ում ինֆլացիայի տեպը բարձր է եղել, քան ԱՄՆ-ում, որպես կանոն, հաջորդ տարում արձանագրվել է փոխարժեքի աճ: Իսկ այն տարիներին, որոնք ԱՄՆ-ում բնութագրվել են ավելի բարձր ինֆլյացիայով, քան ՀՀ-ում, հաջորդող տարում տեղի է ունեցել փոխարժեքի անկում: Փոխարժեքի և ինֆլյացիայի տեմպի միջև առկա կապը ներկայացված է գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3
**Դոլար-դրամ փոխարժեքի տատանումների ու ինֆլյացիայի տեմպի բնութագիրը
ՀՀ-ում և ԱՄՆ-ում 2000-2012թթ.-ին³**



Կատարված վերլուծությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- Կարճաժամկետ հատվածում (ամսական կտրվածքով) փոխարժեքի վրա ազդող գործոնները դրամի առաջարկի փոփոխություններն են, որոնք առաջնում են տնտեսական ակտիվության կարճաժամկետ հարաբերական տատանումների պատճառով,
- Միջնաժամկետ հատվածում փոխանակային կուրսի տատանումների հիմքում ընկած են արտարժույթի միջազգային շուկաներից եկող ազդակները,
- Երկարաժամկետ հատվածում փոխարժեքի վրա ազդող հիմնական գոր-

³ ՀՀ-ում և ԱՄՆ-ում ինֆլյացիայի տեմպի ցուցանիշներն ըստ Համաշխարհային բանկի:

ծոններ են Աերտնտեսական և միջազգային բնույթի գործոնները (սեղոնային և քաղաքական):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Դուշյան Յ. Բ.**, Սակորտնտեսական կարգավորում, ԵրՊՏԻ, Երևան, Տնտեսագետ, 2005:
2. **Մեմբրու Ն. Գրեգորի**, Մակրոէկոնոմիկա, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1997:
3. **Մելիքին Մ., Դաստիեղ Ա.**, Միջազգային տնտեսագիտություն, Երևան, 1999:
4. **Григорий Н. Мэнкью.** Макроэкономика: Изд. Моск. ун., 1994.
5. **Кемпбелл Р., Макконнелл, Стенли А., Брю.** Экономикс.-М.: Республика, 1992 (в двух томах).
6. **Медведев О. Е.** Современная экономика.- Ростов-на-Дону: 1996.
7. **Самуэльсон П.** Экономика.- М.: Прогресс, 1992 (в двух томах).
8. **Фишер и др.** Экономика.- М.: 1993.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԱՅՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

<http://www.cba.am>
<http://www.wsj.com>
<http://www.worldbank.org>

ФАКТОРЫ, ВЛИЯЮЩИЕ НА КОЛЕБАНИЯ ОБМЕННОГО КУРСА ДОЛЛАР - ДРАМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**Մ. Հ. ԵՐԳՆՅԱՆ
Ն. Ա. ՕԳԱՆՅԱՆ**

В условиях рыночной экономики характер экономической деятельности зависит от системы установления обменного курса валюты. В работе показано, что колебания курса доллара по отношению к драму в РА изменяются под воздействием различных факторов. В процессе анализа привели к выводу, что особенно во внешних отношениях целесообразно применение плавающего обменного курса, который будет стимулировать не только объем чистого экспорта, но и способствовать стабилизации экономики.

FACTORS AFFECTING DOLLAR-DRAM EXCHANGE RATE FLUCTUATIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

**M. N. HERGNYAN
N. H. OHANYAN**

In conditions of market economy the nature of economic activity depends on the system of currency exchange rate definition. In this context dollar-dram exchange rate fluctuations in the RA may be changed by the influence of various factors. The analyses showed that the usage of floating exchange rate during the operations with the external sector is appropriate.